

տասանական և տրամաբանա-
կան գիտութիւնը արտադրեց
և բարգաւաճեց, Սեմական
աղգերը գլխաւոր կրօնքները
ծնան, եւն:

Օսմ: հողին վրայ գոնէ մին.
չև ցարդ ամեն բանի մէջ Գաղ-
ղիոյ հետևուած է: Թէև ար-
տաքին ձևէն ի դատ ոչ մի բա-
նով Գաղղիացի չեն եղած: Սա-
կայն և տնայէս սոսկ Գաղղիա-
ցի լինին անգամ մեզ կ'ըստի
թէ՛ արդիւնք մը յառաջ չէր
կրնար բերել, ըստ որում ինչ-
պէս ըսինք՝ ամեն երկիր իրեն
յատուկ յատկութիւնն ունի,
բաղմաթիւ ուրիշ պարագանե-
րու հետ ի միասին: Ըստ մեզ
Արևելքի գլուխները Արևմտեան
ուղեղներուն հետ չեն կրնար
բաղդատուիլ:

Այո՛, հետևիլ Սակոյն յա-
րաժամ չմոռնալ այն օրէնքը թէ
«և զխոտունն ի բաց ընկեա-
ցուք»: Իսկ մեր հետևումը ներ-
ուի մեզ ըսել որ մոլութեան
հասած է. այնպէս որ Մէլիտի-
նէցւոյ լեզուաւ խօսելով՝ «Թու-
ռը մառնեմ մանձ Աստուծուն»:
Խո՛ր են անոր խորհուրդները,
եթէ Նարոյէսն իր բարձրութե-
նէն գահազմէ՛ չլինէր, գուցէ
Թուրքիոյ Հայերս՝ Ռուսիոյ Հա-
յոց առևս լինէին առաջ՝ մենք
Ֆրանսիայ լինէինք:

Աստ ի դէպ է բացատրել
մեր վերոյիշեալ կարծիքը: Օս-
մանեան հայ երիտասարդու-
թիւնը՝ որչափ ինչ մեզ յայտ-
նի է՝ Գաղղիոյ և Անգղիոյ բար-
ձր և համակրական ածական-
ներ կ'տայ միշտ. իսկ Ռուսիա
անոնց համար տէսքթ է, բռ-
նապետ է, ինչո՛ւ, որովհետև
ամենակալանող քաղաքականու-
թիւն մ'ունի եղեր, որովհետև
հայերը ուսուցանել կ'փափաքի
եղեր:

Ինչ զուր գաղափար, Ըսէք
կ'ինդրեմ, ինչ դժուար բան է
հասկնալ թէ՛ եթէ Գաղղիան և
Անգղիան այսքան տարիէ ի վեր
հազար և մի ծուռ ու մուռ
ճանբայներով՝ իրենց երկրէն
զուրս, ուրիշ պետութեան մը
հողին մէջ միշտ աշխատած են
կաթոլիկ կամ Ռոթէտտանթը.
նել և կ'տքնին դեռ, ինչ իրա-
ւամբ արդեօք Ռուսիա՛ իր հո-
ղին մէջ եղող հայերը ուսու-
ցենել ուղեղն համար՝ տէս.
բոթ, բանակալ և համայնակու-
լլայ, իսկ միւսները՝ Գաղղիա
և Անգղիա՛ լեզբուլ: — Բայց
Մանչէսթըրի Հայք ազատ են
եղեր:

Մասկովայի և Բէթէրսպուր.
կի Հայերն ալ այնքան ազատ
են, այնպէս որ նոքա սեպտեմ-
բերէն մինչև մարտ շաբթու մէջ
մի քանի երեկոյներ ուզած թա-
տերական խաղերնին կրնան ներ-

կայացնել՝ առանց բնաւ հարցնե-
լու իշխանութեան իսկ Հայաս-
տանի մէջ՝ այդ ուրիշ բան է:
Բայց շիտակն ըսելու համար
Ռուսիան իր այդ բրածներուն
համար բնաւ տեսութ կոչել ի-
րաւունք չէ, նա՛ զայն կընէ
ինչ որ ուրիշ Պետութիւնք ալ
կընեն: Եւ չկարծուի, որ մի-
այն Ռուսիան է Սիպիր ունե-
ցողը, ամեն տէրութիւն իր
Սիպիրն ունի, ինչպէս Գաղղիա
զնոր-Քալեթոնեա և այլք զայլ
տեղիս:

Ինչ շուտ մոռցանք, որ մեր
ժամանակէն առաջ Պարսկաս-
տանն ալ իր խուժաստանն ու-
նէր:

Հարկ չկայ մեր դրացի տե-
րութիւններն տկար, կամ պա-
կասաւոր, կամ կործանելու մօտ
և կամ վտանգի տակ ցոյց տա-
լու աշխատիլ, մեր տկարութիւ-
նը, թերութիւնը կամ անկու-
մը պատրուակելու և սքողելու
համար: Ճշմարիտ հայրենասի-
րութիւնն է մեզի համար՝ թող-
լով օտարին պակասութիւննե-
րը, ջանալ և աշխատիլ անկեղ-
ծօրէն սր մենք մեր պակասնե-
րը, մեր թերութիւնները ուղ-
ղենք և այսպէս ազատենք ըզ-
մեզ կործանումէ, որ անխու-
սափելի է, եթէ այսպէս աչ-
քերնիս խփենք. տեսնել ու ի-
մանալ չուզենք մեր թերի կող-
մերը, և այս յամառ ընթաց-
քին մէջ յարատեւելէ ետ չկե-
նանք: Օտարին անկումը մեզ
չկրնար վրկել անկումէ:

Բ. Ա.

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Տիգրանակերտ 3/15 օգոստ. 1879
... Խմբագիր Տէր:

Տեղւոյս աղգային խառվու-
թիւնը փոխանակ առաջուան
նման օր քստ օրէ տեւնալու և
սաստկանալու՝ փիլիպպոս սրբա-
զանին մեկնելէն ի վեր է որ,
ընդհակառակն հետզհետէ մեղ-
մանալ սկսած և բաղձացեալ
համաձայնութիւնն գոյանալու
վրայ կերելի Այժմ գրեթէ մա-
րած է այն սաստիկ ատերու-
թիւնն և ոխը մեր ազգ. գըրգ-
ռեալ կուսակցութեանց մէջ,
թուականէս քանի մ'օր առաջ
քննիչ պաշտօնեայք ամենայն
դժուարութեամբ, առ ժամա-
նակեայ քաղաքական ժողովոյ
մը ցանկ պատրաստելով, հա-
կառակորդ կուսակցութեան
պարագլուխներէն մի քանին կը
կոչեն որպէս զի հաւանութիւն-
նին առնելով վաւերացնեն իրենց
այդ որոշումն, յիշեալ անձինքն
ալ բնորոշներէն վեցը կ'վաւե-
րացնեն և միւս երկուքին հրա-
ժարիլ կ'պահանջեն. անմիջա-
պէս իրենց կամքը կատարվե-
ցաւ:

Սակայն կ'ցաւ ըսելու որ

այս վաւերացեալ 6 անդամնե-
րը Սահմանադրութիւն բառին
նշանակութիւնն անգամ չգիտ-
նալէն զատ, խեղճերը հասա-
րակ ընթերցմունք իսկ գիտնա-
լէ զուրկ են դժբաղդաբար Ա-
սոնց հաստատութիւնը ուրիշ
բանի չպիտի ծառայէ երբէք՝
այլ միայն աշագայ խառվու-
թեան մը: Պատճառներն շատ
են, զորս մի առ մի թուելու
տեղը չէ:

Անցեալ ամսոյ 24ին երեկոյ-
եան ժամը 3ին միջոցները բար-
ձրագոյն հրամանաւ 23 բռնա-
ւոր քիւրտ պէյր և աղաներ,
և օգոստ. ին ալ դարձեալ գի-
չերուան ժամը ին միջոցները
23 քիւրտ աղաների Պոլիս զըր-
կուեցան, առաջինները գրաս-
տով և երկրորդները հետիոտս
կապեալ, Բաւական ուրախու-
թիւն պատճառեց այս անակըն-
կալ դէպքը մեր բոլոր թէ գա-
ւառացի և թէ քաղաքացի ազ-
գայնոց:

Անցեալ ամսոյն սկսաւ քա-
ղաքիս մէջ խառն Բօլիսի և
ժանտարմայի հաստատութիւնն
սակայն այս հաստատութիւնն
ըստ օրինի և հաւասարութեամբ
չեղաւ: Քանզի այս գործը տեղ-
ւոյս քաղաքացւոց Առաջնորդ-
Ապտ-Իւլ-Շօլին յանձնուած էր,
որն որ իւր ազգակիցները յա-
ռաջ քշելով միւսները յետս ձը-
գեց, 37 բօլիսի մէջ 22ը քաղ-
ղեացի, 5ը Հայ, 6ը Տաճիկ, 1ը
Ասորի և 3ը կաթօլիկ են: Ա-
հաւասիկ հաւասարութիւնը,
Այս բանն ալ մեր ազգին՝ հոս
տառնց առաջնորդի և անգը-
լուխ մնալուն հետեւանքն է,
առ որ Գեր. Սրուանձտեանց և
Պոյաճեան էֆենդին ալ կերելի
թէ անկարող եղեր են բան մը
ընելու:

Այս շաբթուան ընդունած
ազգ. թերթերնու մէջ Տիգ-
րանակերտի նորոգ հաստատ-
եալ անգղ. «հիւպատոսին» քա-
ղաքիս աղգայնոց և կոյս. զօ-
րաց մէջ պատահած կառոյնա-
թիւ ան Լորտ Սալիլզրի քա-
շած մէկ հեռագիրը տեսնուե-
ցաւ, որով կ'ձանուցանէր այն-
պէս՝ իւր թէ քաղաքիս ազ-
գայնոց միջեք կուր մը պա-
տահելով 15 հոգի վերաւորուեր
և կամ մեռեր են, հաղիւ թէ
կայս. զօրաց միջամտութիւնը
յաջողեր է կուր զսպել Սայս-
պէս չէ գործը երբէք. կուր
զօրացմէ սկսաւ, հետևարար
կուր կայս. զօրաց և մեր ազ-
Աղգայնոց մէջ պատահեցաւ,
մեռեալ տեղի չունեցաւ երբէք,
կ'ցաւ ինք որ հեռագիրը տը-
ռուող ինքը հայ ըլլալով այս-
պէս սխալ և խեղաթիւրեալ կը
ներկայացնէ իրողութիւնը Լորտ
նախարարին: Արդե՛ն:

Մարաշէն ալ գրուած տե-
ղեկութիւնք կ'ձանուցանեն թէ
ամսոյս սկիզբները Մկրտիչ կա-
թողիկոս բողոք մ'ուղղեր է
կայս. Գոմիսէրներուն բանտար-
կելոց նկատմամբ տրուած վըճ-
ուոյն դէմ, երբ դեռ Սախտ
բաշա լիազօր Գոմիսէր ընտրը-
ւած չէր, բայց որ ցարդ ա-
ռանց արդեան մնացեր է, Ուլ-
նեցի բանտարկեալներէն 16 ան-
ձինք ազատուելով, դեռ 125,
Ուլնեցի բանտարկեալ կ'մնան ի
Մարաշ յետին ծայր թշուառու-
թեան մէջ: Յուլիսի վերջերք
հիւանդանոցէն 3 հատ ուլնեցի
բանտարկեալ փախեր են, վառ-
վուռ անուն ուլնեցի մ'ալ, որ
նոյնպէս փախտական էր, այս
օրերս բանուեր և Չէյթուէն
Մարաշ զրկուած ատեն, ճան-
բան ձիւար զօրաց ձեռքէն
դարձեալ փախեր է: Այս օրե-
րս Ուլնիա խաղաղ է, ցարդ
ոնէ տուրք վճարուած չէ, պա-
գայնն ալ նոյնպէս պահանջող
չկայ: Նոր Գոյմազամ Հիւանդ-
էֆ. կ'լանայ գոհ ընել ժողո-
վորդը. Ուլնիոյ միջիթը և Հա-
յոց դպրոցը շինելու հրամանա-
գիր գացեր է, այժմ խնդիր ե-
ղեր է հոն տէրութեան սնտու-
կէն Հայոց դպրոցին համար
2000 դշ. ամսական նպաստ մը
տալ:

— Կարինէն ալ կ'գրեն թէ՛
անցեալներն՝ հայ աղջիկը բռ-
նարարող պարսիկ պատանին 15
տարուան բանտարկութեանդա-
տապարտուելով, տեղական կա-
ռավարութիւնը՝ բռնաբարեալ
աղջկան պատուոյ փոխարինու-
թեան գոյն կամ պարտանաց
դուամարն ուղեր է իմանալ մեր
ազգ. Առաջնորդարանէն:

— Երէկ Ս. Պատրիարք Հօր
նախագահութեամբ կրօնական
համագումար ժողով տեղի ու-
նեցաւ. Գում գաբուրի Պատրի-
արքարանը, և հրաժարեալ 3 ե-
կեղեցական երեսփոխանաց տեղ
նորերն ընտրուելու համար՝ վաղ-
ուան երեսփ. ժողովոյ նիստին
ներկայանալի եռապատիկ թուով
ընտրելիաց ցանկ մը պատրաս-
տուեցաւ:

— Քաղ. ժողովոյ անդամներ
րէն, կն արդէն հրաժարած լին-
ներով, կ'լանմը թէ այս անգամ
ալ ուրիշ երկու ժողովական հը-
րաժարական տուեր են, որք են
Ղազարտոսեան Սահակէֆ. և
Ալթուլ-Տիւրի Առաքել էֆ.

— Մասիսի գշ. աւուր թը-
ւով հրատարակեալ անստոր-
գիր նամակ մը՝ վարդուհեան
ընկերութեան հիմնադրաց կը-
մանէ ժողովոյ գումարման հրա-
ւերէն դէմ կ'խօսի, յայտնելով
թէ՛ քանի որ ընկերութիւնն իր
ընդհ. ժողովոյ գիւանք ունի,
ինչո՛ւ ասկէ չհրաւիրուիլ ալ

հիմնադրներէն, ուստի և այժմ. մէն կ'ընդունէ ժողովոյն ընկերք. սեէ սորոշմանցը դէմ:

—Այս բողոքը զորով թիւն մ'ունենալու համար, հարկ էր գոնէ որ բողոքող անդամք յայտնի դնէին ստորագրուած թիւնին նամակնուն տակը:

—Կիմանամք թէ Արմաշու վանահայր Աշքեան գեր. խորէն Արքեպիսկոպոս քանի մ'օրէ ի վեր մայրաքաղաքս կ'գտնուի անձնական գործոյ մը կարգադրութեան համար:

—Ստուգապէս կիմանամք թէ Ոստիկանութեան լուր զըրկուեր է ազգ. Պատրիարքարան որ Մշեցի տիրացու Յակոբք երաշխաւորն առնուելով այսօր պիտի արձակուի բանտէն:

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Անգղիոյ դեսպանին յանձնարարութեանը վրայ, Բ. Դուռն յայտնած էր թէ, մտադիր է գաւառները գանձային քննիչներ զրկել երթալ գաւառաց հաշուետուներն ու արոց հաւաքման եղանակներն աչքէ անցնելու և Դրան տեղեկագրելու, եւ քանզի այս պաշտօնին համար ոչ տաճիկ և ոչ օսմանցի մարդ չէ կրցեր գրանուիլ, ուստի և Դուռն ալ ինչդեր է տէրութեանց դեսպաններէն, որ այն պաշտօնին ձեռքնհաս և հմուտ ո'ր անձինքը որ կ'ձայնեն, ցոյց տան Բ. Դրան:

Լիանթ այս մասին կարծիք կ'յայտնէ. ըսելով որ «եթէ թուրքիս ինքզինքը իր մարդոցը ձեռքը չպիտի կարենայ բարոքել, ըլլալիք բարոքումներէն այնքան մեծ բան մը չը յուսացուիր»:

—Մենք այս մասին Լիանթի կարծիքէն չեմք:

—Օսմ. Պանքային և տեղւոյս սեղանաւորաց հետ Բ. Դրան սկսած բանակցութեան նիւթ եղող նոր մէկ փոխառութեան մէկ մասը, 250.000 սոկուոյ չափ, գէնքի տակ գանձող զօրքերն հետզհետէ վճարելով տեղերին ճանրելու համար պիտի գործածուի Այժմ Պանքաներուն ուզած երաշխաւորութեանց մէկն ալ սա' է որ յիշեալ գումարը բուն այդ յատկացեալ բանին համար գործածածուի, և ոչ թէ այդ անուամբ առնուելով վերջը ուրիշ բանի յատկացուի:

Ասով հանգերձ Դրան ասկէ ամիս մ'առաջ բանակցել սկսած ուրիշ փոխառութիւն մը 240.000 սոկուոյ, կնքուելով, կէսն արգէն Գանձուց պաշտօնէին յանձնուեր է:

—Մայրաքաղաքիս անգղ. դեսպանատան Ա. քարտուղար Պ. Մէլէտ, որ ծանօթ է մեր ազգին Ուրիս բրած ուղևորութեամբ և Ուրիոյ գործոց վերայ առ անգղ. դեսպանն յղած նշանաւոր իր տեղեկագրովը, որոյ վրայ Հուլիսի կուսակալը պաշտօնէն ձգուեցաւ, այս անգամ Երկրպետին անգղ. ընդհանուր հիւպատոս և դեսպանական գործակատար ընտրուելով Պ. Վիլիամսի տեղ, անցեալ շաբթու Լուստայնէ մեկնեց է Երկրպետու երթալու, որոյ տեղ այժմ

Պոլսոյ անգղ. դեսպանատան Ա. քարտուղար ընտրուել սորոշուեր է եղեր Սըր Ճօն Ուալշէմ, Պերլինի անգղ. դեսպանատան Ա. քարտուղարը:

—Սըր Լէյարտ ասկէ 10 օրէն իւր տիկնոջը հետ Անթիլօր շրջանաւորը նախ Պէյրութ պիտի մեկնի, և քանի մը շաբաթալ Սիւրիա պիտի կենայ:

—Սօֆիայի անգղ. հիւպատոս Պ. Բէլլիքէյալ ուրիշ պաշտօնի մը պիտի կոչուի եղեր:

—Դեսպաններն իրենց վերջին գումարմանը մէջ, պարզապէս մերժել սորոշեր են Բաթէն թի տրոց նոր ծրագիրը:

—Մայրաքաղաքիս գաղղիացի գաղթականութեան ամե. նէն նշանաւոր և սարևոր անձներէն մին, Պ. Ժան Ալէօն, Բշօր Պէօլիքտէրէ վախճանեց է 80 տարեկան հասակին մէջ, յուրկաւարութիւնը այսօր պիտի կատարուի Բերայ:

—Պալատ Յունաց Այբօս-Սթրաթիս անուն եկեղեցին Բշօր զիշեր գող մանելով կողոպտուեր է, Դողիքը եկեղեցւոյ նըկուղին մէկուն մէջէն ծակ մը բանալով անկէ մտեր են ներս և խել մը ծանրագին սպանելէ ու սրբագոն անօթներէ զատ նաև 60ի չափ ալ տեղ. հին գրեթե վերուցեր են. Ոստիկանութիւնը քանի մը կասկածելի անձինք ձերբակալեր է:

—Երէկուան թերթով Արնափուտքէօյի մէջ տեղի ունեցած խուղութեան դէպք մը յիշատակցինք երկու զինւորացիքը և գող բանուելուն առթիւ, Լեւանթ հետեւեալ կերպիւ կը բացատրէ գործը:

Պէպէքի պահակազօրէն 2 զինւոր երեկոյին Քեամիլ բաշայի այգիին կողմերը յուռ գալու ելնելով, պարտիզայաններն և հովիւներն զանոնք գող կը կարծեն և բռնելով կ'տանին տեղւոյն պահականոցը յանձնուելու, ճամբան ամբողջ երթալով կ'չառնայ, որն որ ի վերջոյ կ'ցրուի, 2 զինւորաց տեղւոյն հազարապետին ձեռքն յանձնուելովը, որ զանոնք ձերբակալութեան տակ կ'ղնէ:

ՅԻՆԵԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Թիւ 362 Ուղուն-Չօրչը

Այս գրատան մէջ սկսուած է գրի և զժողովութեան վերաբերեալ պիտոյքներ ծախուիլ Գիւնբու շափաւորութիւնը ուղղը կրնայ փորձով տեսնել:

ՀՆՈՒՊՐԱԼՈՒՐ

Թէհրան 1 սպտմ.

Պարսից կառավարութիւնը ծանոց թէհրանի օսմ. դեսպանին թէ, Պարսկաստանի սահմանադրութիւն վրայ Գիւրմանշահի մէջ ժամտախտ ելած ըլլալու

մասին օսմ. առողջագահական գործակալաց կողմէն է. Պոլսոյ շրկուած տեղեկագիրն անհիմնէ:

Ոչ սահմանադրութիւն վրայ և ոչ Պարսկաստանի մէջ ժամտախտի հետքն անգամ չկայ:

Այս առարկայի հասած

Ս. Բէթէրպուրկ 2.—Ս. Բէթէրպուրկի ժուրնալը Ռուսիոյ գահաժառանգ իշխանին Շուէտ ըրած ուղևորութեանը վրայօք խօսելով կըսէ թէ՝ Սթօքհոլմ բրած իւր այցելութիւնը պարզ քաղաքավարական բան մնէ. թէ Ռուսիա բարեբաղ է իւր հիւսիսային դրացի պետութեանց հետ լաւ յարաբերութեանց մէջ գտնուելուն համար, բայց եւ անկէ ոչ նուազ կ'փափաքի որ Գերմանիոյ հետ ալ իւր հին բարեկամութիւնը պահէ և ամբարպէտէ:

Պերլին 2.—Վիլհէլմ կայսեր և Աղէկասնիք կայսեր տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ վաղը յԱլէքսանդրապօ (°)

Վիէննա 2.—Զրոյց կայ թէ Պիլզնարք իշխանը սպտմ. 14ին Վիէննա պիտի գայ:

Հոռով 2.—Կարիպոլտի զօրագետը Գարբերա գարձաւ:

ԳՐԱՄԱԿԱՆ

Այս առարկայի բացուեցաւ	12.17
Բումբէր	44.25
Թղթադրամ	800.00
Պրիւն	500.00

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Նորէն մեծ տէրութեանց մէջ նոր և մեծկակ պատերազմի մը համար այժմէն պատրաստուելու երկու զինուորացու ճառաւ, Եւրոպայի հրապարակաց վրայ գործառնութեանց վերստին գաղարու մը կ'ձանուցանեն:

—Ստոյգ տեղեկութիւն ունեցող անձինք կ'հաւատան թէ այսօր ժամը 7ին Սալֆէթ բաշայի ապարանքը գումարուելով թնրքօհեղինական յանձնաժողովոյ նիստին մէջ, հիւլէն պատուիրակներն իրենց ապիք պատասխանը՝ մինչև բանակցութիւնը խզելու աստիճան յառաջ չտանելու հրահանգ ստացեր են:

—Արտք. գործ. պաշտօնէ. ութեան իրաւարան Պ. Բարնիս և Պ. Թարէն Յրգ կարգի օսմ. պատուանշան ստացեր են:

—Եգիպտոսի խաղիւն գործակատար Երամեան Աբրահամ բաշա երէկ հոս հասաւ:

—Արևել. բումբէրի երկրպետ հորաց բանակին սպայներէն 16 սպայ, կոչուելի մը մէջ օսմ. կառավարութեան խօսքեր ըրած բլալով, Բ. Դուռն հրաման ըրեր էր Ալէքս. բաշայի որ այդ անձինքը բանակէն ստուարէ, իսկ Ալէքս. բաշա առ Բ. Դուռն տուած իր պատասխանին մէջ զէպքը խիստ թեթեւ և անըշան բան մը ցոյց տալուն վրայ Բ. Դուռն ալ այժմ գործը Յիլի պէի և Երոպ. խառն յանձնաժողովոյ քննութեան և որ շմանը յանձնեց է:

—Միջերկրականի անգղ. նա.

ւաւորմին հրամանատար Ամիճրալ Հօրնպի քանի մ'սպայներ ըրով առջի օր մայրաքաղաքս գալով ուղղակի թէրապիա տեղը դեսպանատանը գացեր է:

—Երէկ առաւօտ Ֆրէսինէի ընկերութեան շոգենաւներէն մին Աւստր. Լոյտի ընկ. Արօլո անուն շոգենաւուն դէմ զարնուելով, այս վերջինը ծանրապէս վնասուեր է:

—Գուրիէ տ'Օրիանի արտօնատէր Պ. Ճիանթէթրի երէկ Սօֆիա մեկնեց է, հոն պաշտօնական Պուլկարեքէն և գաղղիներէն թերթ մը հիմնելու համար:

—Պ. Հիրշի ընկերք 1.200.000 սոկուոյ փոխառութեանը համար առաջարկած պայմաններն հետեւեալներէն կ'բաղկանայ երկր.

Պ. Հիրշ գանձէն ունեցած առնելիքը. 700 հաղար սոկի, վար դնելով, մնացած 500.000 սոկուոյ տեղ ալ պայմանաժամով փոխանակազրկեր պիտի յանձնէ Գանձուն, այս գումարէն ալ կրկին և կանխաւ զեղչելով ամբողջ փոխառութեան 15 ամբուան Օ/Օին 8էն տոկոսիքը, Գանձը պարտաւոր պիտի ըլլայ 15 ամսուան մէջ վճարել 1.200.000 սոկին Պ. Հիրշի:

Առ այս յերաշխաւորութիւն Պ. Հիրշ կ'պահանջէ որ մաքսատուրքերը, Սէլաիկի գաւառին ծխախոտի տասանորդը և ըՍ. պարագետի դրան զինւորական Պէտէլէի տարբը հաւաքելի իրեն յանձնուի:

Իսկ եթէ ասոնք ալ չբաւէ, իրրև յաւելուածական երաշխաւորութիւն կուգէ որ Պրուսայի, Լիկիերի և Էտրէի գաւառաց խաչանց տուրքը և Արգենտինա-Մատէնի պղնձի հանքն ու պատրաստ պղինձն ալ իրեն յանձնուի:

Ասոնցմէ զոտ կ'պահանջէ նաև որ հրապարակի գնովը 3 միլիոն Ֆր. Քոնստանտին և 40 միլիոն Ֆրանքի ալ 73ի արժեքումս իրր աւանդ տրուի իրեն:

Վերջ ցոյց տրուած հասուցից հաւաքմանը՝ բնաւ օսմ. կառավարութիւնը չմիջամտելով Պ. Հիրշին, քը պիտի հաւաքէ, և իր փոխանակագրերն ալ գանձուն չյանձնուած՝ զանոնք ինքը մէկ կողմէն հաւաքելու պիտի սկսի եղեր:

Իսկ եթէ օսմ. Գանձը 15 ամսուան միջոցին ուրիշ մեծ կուի փոխառութիւն մը կնքէ, Պ. Հիրշի այս 1.200.000 սոկին սորոշալ պայմանաժամէն առաջ հատուցանելու պարտաւոր պիտի գանուի:

ԹԵԼԵԳՐԱՆ ԿԱՍ ՀԵՌԱՉԱՅԵՆ

Հեռագրային ինչպէս արդէն յայտնի է, գործիք մ'է որ հրապարակեցաւ Ամերիկա, և որով ձայն կ'զրկուի հեռաւոր տեղեր հեռագրական թելերուն միջոցաւ, Հեռաւոր ձայն մը լսելու համար ի սկզբուն հօրկաւոր էր գործին բանի սկանչին. բայց էր գործին որ կրնայ հաստատուիլ մեծ սննդի մը պատիւ, և այն գործոյն միջոցաւ սննդի մէջ զանաւոր մ'ըզիկ կընան լսել:

ինչ որ կ'ըստուի կամ կերպուի մյոննեբով հեռուն :

Լոնտոն հրատարակուած լըրագրի մը մէջ Անգղիոյ Հալիֆաքս քաղաքէն նամակ մը տեղեկութիւն կուտայ կրօնական պաշտաման մը վրայ որ այն քաղաքին մէջ կատարուեցաւ . և վերոյիշեալ գործւոյն միջոցաւ լուեցաւ ուրիշ հեռաւոր քաղաք մը : Մանչեսթէր : Ահա լըրագրին խօսքը :

«Կիրակի աւաւտուուն հեռաձայն գործի մը գրուեցաւ Սգուէյր չըբէ կոչուած եկեղեցւոյն բնմը, փոքր պատուանդանի մը վրայ, իբր երկու ոտք յաջմէ քարոզչին : Հեռագրական թելերով հաղորդակցութեան մէջ դրուեցաւ գործին երկաթուղւոյ կայանին հետ, և անկէ մինչև ի գրասենեակն Սր. վարպետը ունի որ է վերատեսուոյ Լանգաշայրի և Եորքշայրի երկաթուղւոյ ընկերութեան հեռագրական կայանին : Յիշեալ գրասենեակը ժողովուած էին Մանչեսթրի Տէյլի Նիւուզ լըրագրին թղթակիրները, բազմութիւն մը ելկեղեցւոյն և ալլը : Սգուէյրի եկեղեցւոյն մէջ առաջուց ամեն բան պատրաստուած էր, բայց ժողովուրդը այս բաներուն ամենին տեղեկութիւն չունէր : Մանչես. դէրի մէջ Սր. վարպետը էմմոթի յանձնուած էր հարկաւոր կարգադրութիւններն բնել, և պաշտօնին առին ամեն բան արդէն պատրաստ էր : Թելով հաղորդակցութեան մէջ դրուած այս երկու տեղեաց հեռաւորութիւնն է իբր երեսուն և վեց մղոն, այսինքն երկուսասն ժամ :

Ճիշդ ժամ տասն ու կէսին լուեցաւ յստակ ձայն Տօք. Մէյլըրի որ կ'ձանուցանէր ջս. կըղնաւորութեան երգին թիւը : Երգին երկու տունները կարգացուեցան, քիչ մ'ետքը լքուեցաւ երգեհոնին ձայնը, եւ իբր մի կամ երկու վայրկեան ետք ժողովրդեան ներշնչանալու երգը լուեցաւ . որոշ 'ի գարմացումն ամենեցուն : Երգին սկիզբէն մինչև վերջը յստակ կ'ըսէր մանուանդ բամբէ ձայն հովուին, վասնզի մտադոյն էր նա գործւոյն : Յետ աւարտման երգոյն աղօթք եղաւ, ուրիշ երգեր և ընթերցուածներ եղան և հուսկ ուրեմն տրուեցաւ քարոզը :

Քարոզն ամբողջ հասկցուեցաւ, միայն երբեմն քանի մը բառ անիմանալի կ'մնար, երբ քարոզիչը կ'անակը կ'գարձունէր գործւոյն, կամ քան զսովորականքն ցած ձայնիւ կ'բէր, և կամ հեռագրական թելին վրայէն անցնող լուրերն արգելք կըլլային քարոզչին ձայնին յստակ հասնելուն : Բայց այս դժուարութեանց կրնայ դարման տառուիլ : Պաշտօնէն ետքը կարճ խօսակցութիւն մը եղաւ ի մէջ Հալիֆաքսի և Մանչեսթրի, և ի վախճանի Սր. վարպետի, որ կ'հարկանէր երգեհոնը, նրա ազգեց Սլիւուիան երգեհոնով, որ շատ յստակ լուեցուի ի

Մանչեսթէր : Հեռաձայնի այս փորձը շատ հաճելի եղաւ առաջիկայից :

Աւետարան

ՊԵՐՊԵՐԱՆ ԿԱՐԺԱՐԱՆ

Պէրպէրեան վարժարանի Տընօրէնութիւնն կ'ձանուցանէ որ վարժարանն փոխադրուած է Սէլամնըզ ֆիւրքճիպաշի բնագործակ տունը : Դպրոցը բացուած է օգոստ. 20 երկու շաբթի, իսկ դասերն պիտի սկսին օգոստ. 27ին : Նոր աշակերտ տալ փափաքող ծնողք սոյն միջոցին մէջ կ'հարուիրուին տեսակցել Տնօրէնութեան հետ վարժարանին մէջ :

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ի ՊԵՏՍ ՂԱՐՈՑԱՅ

Յօրինեաց

Ե. Մ. Սարգսեան

Ահաւաստիկ առաջին դասագիրք մը ընթերցանութեան, որ աղայոց հասկացողութեան յարմար բարոյալից և դրօսալի նիւթեր պարունակելէ դատ, քառի շափ յասկագրէս փորագրեալ պատկերներով ճոխացեալ է : Սոյն գրքից 112 երեսէ բաղկացեալ, մաքուր կերպով տպագրեալ և կազմեալ ըլլալով, կ'ձախուի իջնի չձամբ 2 Ինկիլիէր ճառտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրատուանց քով :

Գին 2 ու կէս դր. արծաթ

ԱՌԱՋՈՐԴ

ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՆՆԱԿՆԵՐԷՆ ԱԵՁՈՒԻ

Աշխատասիրեաց

Մ. Պարսապեան Հիւնանց

1879

Անգլիերէն լեզուին դիւրաւ ընտելանալու և քիչ առնելի մէջ խօսիլ սորվելու համար յարմարագոյն և մէկ հատիկ գործի մը կրնար համարուիլ այս նոր գիրքը, որ 240 երեսէ բաղկացեալ է և կ'պարունակէ հետեւեալները :

Մասն Ա. Քերականական կանոններ : Մասն Բ. Զրուցատրութիւն : Մասն Գ. Անգլիերէնի յատուկ ուճեր : Մասն Դ. Համառոտ նամականի : Մասն Ե. Համառոտ բառակարգ : Մասն Զ. Համառոտ բառարան Անգլիերէնէ ի Հայերէն :

Արամեան տպարանէն ի լոյս ընծայուած այս գործը մաքուր տպագրութեամբ և անգլիական կազմով զեղեցիկ կերպիւ պատրաստուած կը ծախուի ամեն գրատուանց խանութները ի գին երկու ֆրանք :

ԱԶԴ

Մէրճաճը իմամ Ալի խանի վերջ յարկը թիւ 20 սենեկի մէջ ամեն օր Տաճկերէն և Ֆրանսերէն լեզուաց ինչպէս նաև թուազիտութեան և Տօմարակոյութեան դասախօսութիւններ կ'ընեն որոշեալ ժամերով մէջ : Դոյն սենեակը նաև յանձն կառնու պատրաստել տաճկերէն և ֆրանսերէն լեզուներով ամեն տեսակ պաշտօնական և ոչ-պաշտօնական գրութիւնք, գործիական լոյզրագրեր, Բողոքագրեր, Տեղեկագրեր, Նամակ և Ն. Արդոյ ազգայինք մեղեալ սենեակը գիմնելով կրնան ապահով լինիլ թէ՛ դասախօսութեան և թէ՛ միանգամայն վերոյիշեալ գրութեանց վերաբերութեամբ փոյթ եւ խնամ, ինչպէս նաև բանաւոր և գոհացուցիչ պայմաններ պիտի զբաւենն նոյն տեղը :

Թուրք Յ. Աւետարան

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ Ուսումն Հասարակաց Ս. Եկեղեցւոյ Գրեթ

Գարեգին Վ. Սրբաձյրեանց Երկրորդ տիպ Գին 60 բարա արծաթ :

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Բանաստեղծական Հ. ՄԱՂԱՔԻԱ Վ. ՕՐՄԱՆԵԱՆԻ Արտասանեալ ի Լսարանի կրթասիրաց ընկ. Իւսկիւտարու Գինն է 3 դր. արծաթ դրամ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԻՏԵԼԻՔ ՈՒ ՊԱՐՏԻՔ ՏՂՈՑ Բազմորդէն Մամուրեան էֆէի աշխատասիրութեամբ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայեալ 248 երեսէ բաղկացած պատուական գիրք մնէ, որ կրնայ հեղեանակին ասկէ առաջ հրատարակած «Նոր ընթացքարան» լրացուցիչ մասը համարուիլ և Մայ կոցի Բ. Գաթի աշակերտաց ծառայելու Սոյն գործը բաց ի ամենակարևոր գիտելիքներէ կ'պարունակէ նաև այնպիսի նիւթեր որք ազգ. մանկուոյն սրտին մէջ ի մատաղ հասակէ հայրենասիրական զգացումներ կը ներշնչեն : Այլ ծախուի Եէնի Չամբի 2/1 Կիրէր ճառտէսի, թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը, գին 1 1/2 ֆր :

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԹՕՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ Այլ ծախուի Եէնի Չամբի 2/1 Կիրէր ճառտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրատուանց քով : Գին 1 ֆրանք

Հ Ա Մ Ս Ո Ս ՄԱՐՄԵ Ա Մ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ի Ն ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հրատարակել ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԱՆ

Սոյն կարևոր և օգտակար գըրքից, որ թէ՛ ի պէտս վարժարանաց և թէ՛ առանձինն ուսանողաց կրնայ միանգամայն ծառայել, յստակ բացատրութեամբ, 150 վայրատիպ պատկերք ճոխացեալ և 140 երեսէ բաղկացեալ ընտիր դասագիրք մնէ, գինն է կէս արծաթ մծիտ, [գաղղղինագրին գինն ըլլալով 5 ու կէս ֆր.] Կ'տնուի Կ. Պոլսի Սուլթան-Համամ Էսապ էֆէ, խան թիւ 27, Նշան էֆ. Կ. Պէրպէրեանի վարագրատունը և բոլոր գրատուանց քով :

ՇԱՐԳ ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ Հեղինակութիւն ՊԱՐԳԱՆ ՊԵՏԻ

Բաժանորդք գրուիլ ուզողներն ղ/միւրե են Բերայ Թարա-Պաշը փոզոց թիւ 22 քաղհնօն գործոյս հրատարակիչ Միհրան Ա. Բիթլիսեան էֆէի և Պոլսի Սուլթան-Համամ Էսապ էֆէ խան փորագրել Պէրպէրեան Նշան էֆէի : Իսկ տեսար առ տեսար գնել ուզողաց համար կ'ձախուի Լուին-Լոնիւ չրափաճառ Մհր. Պոզոս աղայի խանութը, Բերայ Սղա-Չամբի ծիփաճառ Էսապ էֆէեան Յովակի փաղ. թիւ 167 թիւ և Թարա պաշը ծխափաճառ Անդրէաս աղայի խանութները :

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի զեղը բոլորովին բուսեղեններէ բաղադրուած ըլլալով թէ՛ ներսէն և թէ՛ գուրսէն կը գործածուի ու բազմաթիւ ցաւեր ու հիւանդութիւններ շուտով կը բժշկէ :

Ինչպէս որ վարը յիշուած է : Ամեն տեսակ քովի, Ըստամոքսի, մէջքի կամ միջիջեղու ցաւեր, ու նաև Թանչը, Քօլէրա և այլ ամառուան հիւանդութիւններ ունեցողները այս գեղէն խմելու են հետեւեալ կերպով : Կէս գաւաթ ջուրի մէջ, գիր ապտորի մը զրգալէն աւելը շաքար, վրան լեցուր անուշի զրգալ մը Փանասէ աղէկ մը խառնէ ու խմէ :

Կոկորդի հիւանդութեանց, Լուսեցքի համար զեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կաերկու ժամը հեղ մը՝ մէկ կաերկու անուշի զրգալ այն բաղադրութեան խմէ : Յօդացաւի, Բիւմաթիզմի, Ուքի ցաւի, Ստամոքսի ու տեսակ տեսակ կանակի ցաւերու համար գուրսէն ֆանասէ քուելով աղէկ մը շիփելու է : Այնպիսի ցաւի համար քիչ մը բամպակ փանասէի մէջ թաթխելով ցաւած սկապլին վրայ դնելու է :

Ամեն առնէ երրոր ցաւի մը համար գուրսէն ֆանասէ քուել հարկ կըլլայ, եթէ քիչ մը ալ խմուի աւելու շուտ բժշկութիւն կըլլայ : Մարմնոյ պարուած կամ ճմուռած տեղերը բժշկելու համար վտանգը պատահածին պէս Փանասէէն վրան աղէկ մը լեցնելու է : Դառնակով և լին. կարուած վերքերը բժշկելու համար՝ արիւնը շարժած շուտով մը վերքը կապելու և ցաւին վրայէն ֆանասէ լեցնելու է մինչև որ լաւ մը թըլլի ֆանասէն նաև արեան շրջանը կարադացնէ ու բոլոր բնութիւնը կը զօրացնէ :

Այս գեղին օգտակարութեանը վրայ երկարօ էն գրել աւելորդ կը համարուի, գործածողները զայն միշտ կը գովին, ուզող կրնայ անձամբ փորձել, գինն աժան է : Այլ ծախուի Միհրանեան և Ընկերաց Ամերիկեան փաճառատունը որ ի Ղաւաթիա կ. Պոլսոյ

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Գաւաթիա ԴՇ. 22 Օգոստ., Բաց 12.20, Յած գին 12.13, Բարձր գին 12.20, Դոց 12.16, Թղթաղ բաւր բաց 835.00, ցած 820.00, բարձր 850.00, ժամը 11 827.20

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Պոլի, 63ի ֆր. 006.00, 65ի 069.00, 69ի 066.00, 73ի 062.00

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Գանձատուն 21.25, Սուրէթէ Ժէնէրալ 4.06, Սուրէթէ Օթման 3.10, Պանք տը Բօնաթ. 5.28, Իբէտի Ժէնէրալ 4.03, Թրամիլէյ 3.75, Բոււ. Երկաթուղի 44.25

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՑ

Table with 2 columns: Item name and Price. Includes items like (Ու. Կ. 100 ու. 1 Կ. Կ.), Անգլ. Կովի 109.24, Գաղղղ. 87.13, Բօլ 89.39, Իբրմից 51.12, Հինգնոց 19.10, Մէթալիք 17.30, Ճերմակ մէծիտ 06.22, Պղինձ 510.00